Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

159

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

=159=

ՍՈՑ. ԴԱՍՏ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1925

Գրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

Հ. Ս. Խ. Հ.

ՍՈՑ. ԴԱՍՏ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
1925

ՀԱՍՍՐ
1-2406գր

Գրառեպվար № 412 Պատ. № 289 Տիրաժ 1500

Պետհրատի IV տպարան Լենինականում

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Բուրժուական հասարակության մեջ դպրոցը ոգտագործվում է իբրև աշխատավոր դասակարգերի շահագործման հոգևոր գործիք։ Պրոլետարիատի դիկտատուրայի վրա կառուցված խորհրդային հանրապետության մեջ Աշխատանքի Միասնական դպրոցի նպատակն է ստեղծել կոմունիստական հասարակության կառուցման համար մարտիկների մի նոր սերունդ, որը պիտի ոժտված լինի կոլեկտիվիզմի հոգեբանությամբ, ամուր կամքով, անհրաժեշտ հասարակական վորակավորմամբ և մատերիալիստական աշխարհայացքով, հիմնված բնության և հասարակության զարգացման որենքների գիտության վրա։

2. Աշխատանքի Միասնական դպրոցում սովորում են 8—17 տարեկան (ներառյալ) յերեխաներ, կազմելով ըստ հասակի 9 խումբ՝ յուրաքանչյուրը միամյա դասընթացքով։

Ծանոթություն.—Դպրոցական Խորհրդի վորոշմամբ թույլատրվում է ընդունել աշակերտներ, վորոնց հասակը տվյալ խմբի համապատասխան հասակից մի տարով ցած կամ յերեք տարով վեր կարող է լինել։

3. 9-ամյա դասընթացքի սահմաններում Աշխատանքի Միասնական դպրոցն ունի հետևյալ տիպերը.

ա) Առաջին աստիճանի դպրոց՝ 8—12 տարեկան (ներառյալ) յերեխաների համար, վորն ունի չորս խումբ։

բ) Ցերկրորդ աստիճանի դպրոց՝ 12—17 տարեկան (ներառյալ) պատանիների համար, վորն ունի հինգ խումբ և բաժանվում է յերկու լիակատար կոնցենտրի—առաջինը՝ ուսման առաջին յերեք տարին և յերկրորդը՝ ուսման վերջին յերկու տարին։

գ) Ցոթնամյա դպրոց՝ 8—15 տարեկան (ներառյալ) յերեխաների համար, վորն ունի յոթ խումբ։ Այդ դպրոցի վերջին յերեք խմբերը իրենց ծրագրով պետք է համապատասխանեն Բ. աստիճանի դպրոցների առաջին կոնցենտրին։

դ) Գյուղյերիտդպրոց՝ 13—18 տարեկան (ներառյալ) պատանիների համար յերեք տարվա դասընթացքով, հիմնված Ա. աստիճանի քառամյա դպրոցի վրա։

յե) Իննամյա դպրոց՝ 8—17 տարեկան (ներառյալ) յերեխաների և պատանիների համար, վորն ունի ինը խումբ. Ա. և Բ. աստիճանի դպրոցների լիակատար դասընթացքով։

4. Ա. աստիճանի դպրոցի առաջին խումբն առանց քննության ընդունվում են 8 տարեկան հասակի բոլոր յերեխաները։

Ծանոթություն.—Բ. աստիճանի դպրոցի բոլոր և Ա. աստիճանի դպրոցի միջանկյալ խմբերն ընդունելու համար կանոններ սահմանում է Լուսժողկոմատը։

5. Աշխատանքի Միասնական դպրոցում յերկու սեռի յերեխաները սովորում են միասին։

6. Դպրոցում արգելվում է վորևե կրոնական հավատքի դասավանդումը, ինչպես և կրոնական պաշտամունքի ծիսակատարությունը։

7. Աշխատանքի Միասնական բոլոր տիպի դպրոցները պետական են։ Մասնավոր դպրոցների գոյությունը չի թույլատրվում։

8. Աշխատանքի դպրոցում սահմանվում են հետևյալ պաշտոնները.

1) Դպրոցի վարիչ.
2) Դպրոցական աշխատավորներ.
3) Դպրոցական բժիշկ.
4) Տեխնիքական աշխատավորներ։

Ամեն մի կատեգորիայի պաշտոնյաների թիվը սահմանվում է որենսդրական կարգով հաստատված շտատներով։

Ծանոթություն.—Բ. աստիճանի բոլոր դպրոցներում և 5-ից վոչ պակաս խումբ ունեցող մյուս Դպրոցներում սահմանվում են Դպրոցական Խորհրդի քարտուղարի պաշտոն։

9. Ցուրաքանչյուր դպրոց ունի յուր Դպրոցական Խորհուրդը, վորի ֆունկցիաները սահմանվում են ներկա կանոնադրության 21, 22, 23 և 24 հոդվածներով։

Բ. ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

10. Դպրոցի մանկավարժական, տնտեսական և վարչական մասի պատասխանատու ղեկավար հանդի-

սանում է դպրոցի վարիչը, որն և նախագահում է Դպրոցական Խորհրդում։

Ծանոթություն.—Գավառական Լուսավորության բաժնի թույլտվությամբ վարիչը կարող է տնտեսական մասը վստահել մի այլ աշխատավորի վարելու, սակայն վերջինիս կատարած աշխատանքի պատասխանատուն մնում է ինքը՝ վարիչը։

11. Դպրոցի վարիչին նշանակում է Գավլուսբաժինը մանկավարժական փորձ ունեցող անհատներից։ Վարիչի պաշտոնի համար թեկնածու կարող են առաջարկել թե Դպրոցական Խորհուրդը և թե արհեստակցական կազմակերպությունները։

Ծանոթություն.—Դպրոցական Խորհրդի քարտուղարի թեկնածուներ առաջարկում են վարիչը կամ Դպրոցական Խորհուրդը մանկավարժական կազմից և հաստատում է Գավլուսբաժինը։

12. Դպրոցի վարիչի պարտականությունն է հետևել, որ դպրոցում ուսման և դաստիարակության գործը ընթանա Աշխատանքի դպրոցի հիմնական սկզբունքների—աշակերտական ինքնավարության, մանկական աշխատանքի կազմակերպության, աշակերտության քաղաքական դաստիարակության համաձայն։

13. Դպրոցական շենքը կարգ ու կանոնի մեջ պահելու հոգը, նրա վերանորոգության, տաքացնելու, լուսավորելու, տնտեսական և ուսումնական բոլոր անհրաժեշտ պարագաներն ու նյութերը հայթհայթելու պարտականությունն ընկնում է վարիչի վրա։ Վերջինս յուր ստորագրությամբ դպրոցի անունից վա-

ռում է նրա ամբողջ գրագրությունը և կազմում հաշվետվությունը։

14. Դպրոցի վարիչը կամ նրա հանձնարարությամբ դպրոցական աշխատավորներից որևե մեկը թե մանկավարժական և թե տնտեսական խնդիրների վերաբերյալ պարբերաբար զեկուցումներ է ներկայացնում գյուղխորհուրդների և շրջխորհուրդների պլենումների, արհեստակցական կազմակերպությունների ժողովներին և աշխատավորության մասնակցությամբ տեղի ունեցող Դպրոցական Խորհրդի հաշվետու նիստերին։

15. Վարիչն անձնապես պատասխանատու է դպրոցական կարգի խանգարման, դպրոցական նյութի փչացման և կորստյան համար՝ վարչական և դատական կարգով։

16. Վարիչի բացակայության դեպքում, եթե այդպիսին կա, նրա տեղակալը կատարում է ամբողջ աշխատանքը և կրում նախորդ կետում հիշված պատասխանատվությունը։

Գ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐ

17. Դպրոցական աշխատավորներին նշանակում է Գավլուսբաժինը։ Թեկնածուներ կարող են առաջարկել թե դպրոցի վարիչը և թե արհեստակցական կազմակերպությունները՝ Լուսժողկոմատի սահմանած պահանջներին բավարարող անձնավորություններից։ Հավասար պայմաններում գտնվող թեկնածուներից առաջնությունը տրվում է հասարակական ավելի ստաժ

ունեցողներին։ Դպրոցական աշխատավորներին պաշտոնից արձակել կարող է միայն Գավլուսբաժինը։

Ծանոթություն.—Դպրոցական բժշկին նշանակում է Գավլուսբաժինը գավառական Առաժնի համաձայնությամբ։

18. Դպրոցական աշխատավորները, Դպրոցական Խորհրդի աշխատանքի բաշխման և վարիչի ղեկավարող ցուցմունքների համաձայն՝ կատարում են ուսումնական դաստիարակչական աշխատանքներ։

19. Բժշկի պարտականությունն է պարբերաբար բժշկական քննության յենթարկել աշակերտներին, հետևել նրանց առողջության, դպրոցի սանիտարական վիճակին և ղեկավարել դպրոցի սանիտարական լուսավորության գործը։

Ծանոթություն.—Դպրոցում բժշկա-սանիտարական միջոցներ գործադրվում են Առաժողկոմատին կից «Յերեխաների առողջության պահպանության խորհրդի» կանոնների ու հրահանգների համաձայն։

20. Դպրոցի տեխնիքական կազմը նշանակում և արձակում է դպրոցի վարիչը Լուսբաժնի սանկցիայով։ Տեխնիքական աշխատավորները յենթարկվում են վարիչին և իրենց ամբողջ աշխատանքը դպրոցում կատարում նրա կարգադրություններով և ցուցմունքներով։

Դ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

21. Դպրոցական Խորհրդի մեջ մտնում են դպրոցական բոլոր աշխատավորները, տեխնիքական կազմից մի ներկայացուցիչ և բժիշկը։ Դպրոցական Խորհրդին մասնակցելու համար իրավունք ունեն Գյուղ կամ Քաղխորհրդի, Կոմյերիտմիության, Պիոներական Ֆորպոստի մի-մի մշտական ներկայացուցիչները՝ վճռողական ձայնով։

Դպրոցի Խորհրդում վճռական ձայնով մասնակցում են նաև աշակերտական ինքնավարության ներկայացուցիչները, թվով վոչ ավելի, քան Դպրոցական Խորհրդի մյուս անդամների թվի մի յերրորդը։

Ծանոթություն.—1. Այն դպրոցներում, վորտեղ սովորում են սեփական դպրոց չունեցող Մանկատների յերեխաները, Դպրոցական Խորհրդի մեջ մտնում է նաև ամեն մի մանկատան դաստիարակների կոլլեկտիվից մի-մի ներկայացուցիչ՝ վճռական ձայնով։

Ծանոթություն.—2. Բանվորական շրջաններում Դպրոցական Խորհրդում մտնում է տեղկոմների ներկայացուցիչը։

22. Վարիչի հրավերով Դպրոցական Խորհուրդը գումարվում է առնվազն ամիսը մի անգամ և զբաղվում հետևյալ խնդիրներով.—

ա. Ծանոթանում է Կենտրոնից և Գավլուսբաժնից ստացած կարգադրություններին, հրահանգներին և քննության առնում նրանց կիրառման միջոցները։

բ. Հաստատում է դպրոցական աշխատավորների ձեռքով (Լուսժողկոմատի և ուսումնական պլանի համաձայն) կազմած ամեն մի խմբի առանձին և ամբողջ դպրոցի պարապմունքի ծրագրերն ու ուսման պլանը։

գ. Սահմանում է ուսուցման մեթոդները։

դ. Կազմակերպում է աշակերտության աշխատանքն ու հանգիստը։

յե. Դպրոցական պարապմունքները բաշխում է ըստ շաբաթվա օրերի և ժամերի։

զ. Պարբերաբար լսում է դպրոցական աշխատավորների և աշակերտության ներկայացուցիչների զեկուցումները նախագծված աշխատանքի իրականացման, տեղի ունեցած շեղումների և աշակերտության առաջադիմության մասին։

է. Քննում է ընդունելության, խմբերի դասավորության, խմբից-խումբ փոխադրվելու դպրոցի կամ մորևե խմբակի դասընթացքն ավարտողներին վկայական տալու խնդիրը։

ը. Լսում է դպրոցի հասարակական աշխատանքների և ազգաբնակության այս կամ այն խմբակցության՝ դպրոցին ցույց տված աջակցության մասին յեղած զեկուցումները և քննում դրանց վերաբերվող հաշվետվությունները։

թ. Սահմանում է այն միջոցները, որոնցով հընարավոր է հաստատված հրահանգների և կանոնների հիման վրա հաշվի առնել և ստուգել աշակերտների աշխատանքները։

ժ. Բաշխում է դպրոցական աշխատավորների, առարկայական սեկցիաների և խմբակային հանձնաժողովների միջև դպրոցի ուսմնա-դաստիարակչական աշխատանքները և ոժանդակ հիմնարկների գործերը։

ժա. Քննում և հաստատում է դպրոցի մանկավարժական աշխատանքների հաշվառքը։

ժբ. Դիմումներ է ուղղում Գավլուսբաժնին այս կամ այն աշակերտին դպրոցից հեռացնելու մասին։

ժգ. Քննության է առնում դպրոցական գործն ավելի լավ հիմքերի վրա դնելու նախագծերը։

ժդ. Քննում է աշակերտության կյանքի և աշխատանքի մասին ներկայացրած հայտարարությունները։

Մանրություն—Վերոհիշյալ հոդվածում մատնանշվածից զատ՝ Դպրոցական Խորհուրդը զբաղվում է նաև այն խնդիրներով, որոր առաջարկում են Գավլուսբաժինը, դպրոցի վարիչը և կամ Խորհրդի այլ անդամները դպրոցի ուսումնա-դաստիարակչական գործի վերաբերյալ։

23. Խորհրդի որոշումներին համաձայն չլինելու դեպքում վարիչը կենսագործում է իր տեսակետը, ներկայացնելով յուր և Դպրոցական Խորհրդի տարաձայնությունները Գավլուսբաժնի հայեցողության։

24. Բացառիկ դեպքերում վարիչն անձնական պատասխանատվությամբ կարող է լուծել 22 հոդվածում մատնանշված խնդիրները՝ առանց նախապես քննության դնելու Դպրոցական Խորհրդում, սակայն այդ մասին պարտավոր է զեկուցել Խորհրդին մերձակա նիստում։

Մանրություն—Թե Դպրոցական Խորհրդի և թե նրան կից կազմված հանձնաժողովների նիստերի արձանագրությունների պատճենները, ինչպես և Դպրոցական Խորհրդի մեթոդիկ աշխատանքի հաշվառքը ներկայացվում է Գավլուսբաժնին ամսե-ամիս, յեռամսյակների և տարվա վերջին։

ՅԵ. ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

25. Յեթե դպրոցական ցանցը հնարավորություն չի ընձեռում դպրոց ընդունել 8—17 տարեկան բոլոր յերեխաներին, նախապատվությունը տրվում է աշխատավորների յերեխաներին։

26. Ամեն մի աշակերտ, վոր ունի վորևե դասընթացքի վկայական, առանց քննության ընդունվում է դպրոցի համապատասխան խումբը։

27. Աշխատանքի Միասնական դպրոցի քառամյա, յոթնամյա և լիակատար իննամյա դասընթացքներն ավարտողներն ոգտվում են՝ 1-ը տարրական պրոֆտեխնիքական դպրոց, 2-դը՝ տեխնիկում և 3-դը՝ բարձրագույն դպրոց մտնելու իրավունքով, համաձայն Լուսժողկոմատի այդ առթիվ մշակած կանոնների։

28. Աշակերտությանը մի խմբից մյուսը փոխադրելը և դպրոցի կամ նրա խմբերից վորևե մեկի ավարտման մասին վկայականներ տալը տեղի յե ունենում Դպրոցական Խորհրդի վորոշմամբ՝ համաձայն Լուսժողկոմատի այդ առթիվ տրված հրահանգների։

29. Ուսման տարվա ընթացքում աշակերտությունը յերեք անգամ յենթարկվում է բժշկական քննության՝ պարզելու նրա ֆիզիքական և հոգեկան առողջության վիճակը։

Զ. ՈՒՍԱՒՄՆԱԿԱՆ-ԳԱՍՏՐԱԲԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

30. Ուսման նյութի ծավալն ու բովանդակությունը սահմանվում է Լուսժողկոմատի հրատարակած պարտադիր ծրագրներով։

31. Պոլիտեխնիքական կրթության սկզբունքներից յելնելով, Աշխատանքի Միասնական դպրոցը հիմնվում է արտադրական աշխատանքի, նրա պրոցեսների և նրա կազմակերպության բազմակողմանի ուսումնասիրության վրա։

Դպրոցի աշխատանքը պետք է հենվի շրջապատող իրականությանը, սերտ կերպով կապված լինի տեղական արտադրության հետ։ Արտադրական աշխատանքը (գյուղատնտեսական և այլն) խոշոր տեղ է բռնելու դպրոցում։

32. Դպրոցական աշխատանքը և դպրոցական կյանքի ամբողջ կազմակերպությունը պետք է նպաստի աշակերտներին ձեռք բերելու ընդհանուր ունակություններ, կազմակերպելու նրանց սոցիալական բնազդները և պատրաստելու հասարակական-քաղաքական գործունեության համար, (դպրոցում և դպրոցից դուրս տարվող կոլեկտիվ աշխատանքի, աշխատավորական մասսաների և նրա կազմակերպությունների հետ կապ պահպանելու, պատանեկական կազմակերպության, խմբական ընթերցանությունների, դրույցների և այլ միջոցներով)։

33. Աշխատանքի Միասնական դպրոցում սահմանվում է աշակերտական ինքնավարություն, վորի հիմունքները մշակում է Լուսժողկոմատը։

Ծանոթություն.— Կոմյերիտմիությունը և պիոներական կազմակերպությունը աշակերտական միության մեջ հանդես են գալիս՝ առաջինն իր բջիջով և յերկրորդը՝ ֆորպոստով։ Սրանցից յուրաքանչյուրը մի-մի ներկայացուցիչ է տալիս Աշակերտական Խորհրդին։

34. Դպրոցում արգելվում է պատիժը։

35. Դպրոցական պարապմունքների տևողությունը, ինչպես և ընդմիջումները վորոշում է Լուսբաժինը՝ Սոցդասգլխավորի համաձայնությամբ։

36. Դպրոցը տոնում է միմիայն որենքով սահմանված տոները։

Ե. ԴՊՐՈՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

37. Դպրոցի ամբողջ գույքը—կահ կարասիքը, սարգ ու կարգը, ուսումնական պիտույքները, գրադարանը և այլն—մնում է վորպես պետական սեփականություն Լուսբաժնի հաշվին և կարող է ոտարացվել և հանձնվել այլ հիմնարկների կամ անհատների միայն Գավլուսբաժնի վորոշմամբ։

38. Դպրոցին հատկացվում է վորոշ հողամաս Լուսժողկոմատի և Հողժողկոմատի կողմից ընդունված նորմերի համաձայն։

39. Համաձայն գոյություն ունեցող կանոնների, յուրաքանչյուր դպրոց ունի յուր կնիքը։

Ը. ԴՊՐՈՑԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԸ

40. Դպրոցի տարեկան բյուջեն կազմվում է փմնական և հատուկ ֆոնդից։

41. Յուրաքանչյուր տարվա համար դպրոցը կազմում է նախահաշիվ հիմնական ֆոնդի, վորը տնում է ընդհանուր պետական նախահաշվի մեջ, և հատուկ ֆոնդի ու ներկայացնում համապատասխան որգաններին ի հաստատություն։

42. Հիմնական ֆոնդի ծախքերն են՝ աշխատավարձը, ուսումնական, տնտեսական և մանր նորոգությունների, փոստ-հեռագրական, լույսի, ջրի, վառելիքի ծախսերը և շենքի վարձը։

43. Ամեն մի դպրոցական հիմնարկ կարող է կազմել հատուկ դրամական ֆոնդ «..... դպրոցի հատուկ միջոցներ» անունով։

Հիշյալ ֆոնդը կազմվում է.—

ա) Ուսման վճարի գանձումներից, վորտեղ այդպիսին սահմանված է։

բ) Արհեստանոցների, խորհրդային տնտեսությունների յեկամուտներից և դպրոցական ոժանդակ հիմնարկների տնտեսական ոգտագործման և այլ տեսակի մուտքերից.

գ) Դպրոցական հիմնարկների կազմակերպված արտադրական ձեռնարկների յեկամուտներից.

դ) Պետական և հասարակական հիմնարկներից ստացվող ոժանդակություններից։

յե) Մասնավոր անձանց նվիրաբերություններից և այլ պատահական մուտքերից։

44. Հիշյալ հատուկ միջոցները մուծվում են դպրոցական հիմնարկի մոտից նախահաշվի մեջ, ըստ վորում այդ մուտքերի հաշվառումը նախահաշվային հատկացումների կրճատման պատճառ չպիտի լինի։

45. Հատուկ միջոցները ծախսվում են դպրոցի ոժանակ հիմնարկների լրացման և կահավորման վրա, տնտեսական կարիքների համար՝ ի լրումն բյուջետային գումարների, ուսումնական մասի լրացուցիչ աշխա-

տանքների և շտատից դուրս մանկավարժական—տեխնիքական պերսոնալ պահելու համար։

Ծանոթություն. — Հիշյալ միջոցները գանձելու, պահպանելու, ծախսելու, ինչպես և հաշիվ ներկայացնելու կարգը սահմանվում է առանձին հրահանգով։

46. Դպրոցներին կից կազմակերպվում է դպրոցա-տնտեսական հանձնաժողովներ, որոնք դպրոցի նյութական դրության բարվոքման համար ոգնում են կազմակերպելու դպրոցական տնտեսությունը և ստեղծման յեկամուտի աղբյուրներ։

Ծանոթություն.—Դպրոցա-տնտեսական հանձնաժողովները կազմակերպվում են հատուկ կանոնադրության համաձայն։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ

1. Սոցդասավարական դպրոցների մեթոդական աշխատանքները խորացնելու նպատակով Լուսբաժնին կից կազմակերպվում է Գավառական Մեթոդական բյուրո։

2. Մեթոդական բյուրոն ինքնուրույն հիմնարկ է։ Դա մշակում է ծրագրային մեթոդական հարցեր, մանկավարժական փորձը և տեղերի հարցապնդումները հաշվի առնում, խորհրդակցում ժողովրդական կրթության հարցերի շուրջը, պրոպագանդ մղում ձեռք բերած նվաճումների մասին և ղեկավարում լուսաշխատավորների վարակը բարձրացնելու աշխատանքները։

3. Գավառական Մեթոդական բյուրոն Լուսբաժնի խորհրդատու մարմին է հանդիսանում։

4. Մեթոդական բյուրոյի մշտական կազմը հետևյալն է՝

ա) Լուսբաժնի վարիչ կամ Սոցդասավար (նախագահ),

բ) Տեղի աչքի ընկնող մանկավարժներ (3—5 անձ),

գ) Լուսաշխի ներկայացուցիչ,

դ) Լ. կ. Յե. Մ-ի ներկայացուցիչ,

յե) Ագիտ-Բաժնի կամ Քաղլուսավարի ներկայացուցիչ։

1-24069

ԱՌՈՒՈՒՐՆ ՀԱՍՍՄ

ԳՐԱԳԱԼԱՍ

Ծանոթություն. — Մեթոդական բյուրոն կարող է կոոպտացիայի իրավունքով մասնագիտական հարցերի քննության ժամանակ նիստերին հրավիրել մասնագետներին։

5. Լուսաբաժինը Գավառական Մեթոդական բյուրոյին առաջադրում է կատարել հետևյալ խնդիրները՝

ա) մշակել տեղական պայմաններից բղխող մանկավարժական—մեթոդական հարցեր և առաջադրել ռայոնական մանկավարժական խորհուրդներին զբաղվելու.

բ) կենտրոնում հաստատված ծրագրերը և ուսումնական նախագծերը հարմարեցնել տեղական պայմաններին և ուղարկել ռայոնական մանկավարժական խորհուրդներին ի քննություն և ի գործադրություն.

գ) հաշվառման յենթարկել տեղական մանկավարժական փորձը.

դ) վորոշել զանազան հիմնարկներում աշխատանքի ուսումնասիրության ձևերը.

յե) կազմակերպել զրույցներ և խորհրդակցություններ սոցդասաշխատավորների համար.

զ) համագումարներում, կոնֆերանսներում, խմբակային և դասընթացային զբաղմունքների միջոցով կազմակերպված պրոպագանդ մղել աշխատանքի ամենանպատակահարմար ձևերի և նվաճումների մասին։

6. Հարկ յեղած դեպքում բյուրոն իրավունք ունի կազմակերպելու զանազան տեսակի մեթոդական կոմիսսիաներ, աշխատանքի կոչելով զանազան խմբակների, կազմակերպությունների, հիմնարկների, մասնագետների հայլն։

7. Մեթոդական բյուրոն ծրագրային և մեթոդական հարցերով կապ է հաստատում Սոցդասգլխավարչության և նրա միջոցով Լուսժողկոմատի Մեթոդական խորհրդի հետ և պարբերաբար հաշիվ ներկայացնում իր գործունեության մասին Լուսաբաժնին և Սոցդասգլխավարչության։

Սոցդասգլխավար՝ (Մուշեղյան)

Դպրոցական Բաժնի վարիչ՝ (Շավարշյան)

Քարտուղար՝ (Ա. Տեր-Աբրահամյան)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՌԱՅՈՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Գյուղի ուսուցչության կոլեկտիվ աշխատանքը, մանկավարժական և քաղաքական վերապատրաստությունը, դպրոցական շինարարությունն ու դպրոցի և ուսուցչության հասարակական աշխատանքները կազմակերպելու նպատակով հիմնվում են Ռայոնական Մանկավարժական Խորհուրդներ։

2. Գավառը ռայոնների բաժանելու իրավունքը վերապահվում է Լուսաբաժնին, վորի հրահանգով ուսման տարեսկզբին տեղի յե ունենում Հ. Մ. խորհրդի վերակազմությունը։

3. Ռ. Մ. Խորհրդի անդամներն են տվյալ ռայոնի դպրոցների բոլոր ուսուցիչները։

4. Ռ. Մ. Խորհրդի նախագահ ընտրվում է ռայոնի ամենապատրաստված և ամենափորձված ուսուցիչներից մեկը, վորին իր պաշտոնում հաստատում է Գավլուսաբաժինը։ Խորհրդի անդամներից մեկն ընտրվում է քարտուղար։

5. Ռ. Մ. Խորհուրդը յենթարկվում է գավառական Սոցդասավարչության, վորից ստանում է մանկավարժական ընդհանուր ղեկավարություն և վորին պարբերաբար հաշվետու լինում իր գործունեության համար։

6. Ռ. Մ. Խորհրդի նիստերը գումարվում են յերկու շաբաթը մի անգամ այդ ռայոնի գյուղերում փոխ առ փոխ։ Ամեն մի նիստի որակարգը կազմվում է նախորդ նիստում գավառական Սոցդասավարի, Մեթոդական բյուրոյի, շրջանային դպրոցական հրահանգչի առաջարկներով կամ ինքնուրույնաբար։

Ծանոթություն.—Որակարգի խնդիրների շուրջը զանազան դեկուցումներ կամ գործնական բնույթ ունեցող աշխատանքներ կատարելը նախապես հանձնարարվում է խորհրդի վորևե անդամին կամ խմբակին, սեկցիային։

7. Ռայոնական Մանկավարժական Խորհրդի ընդգրկումների գլխավոր խնդիրներն են.—

Ա. Ուսուցչի մանկավարժական ու քաղաքական ինքնապատրաստությունը, վորն է՝

ա) դպրոցական ծրագրի և կոմպլեքսային սիստեմի դասավանդման ուսումնասիրությունը.

բ) ծրագրի հարմարեցումը տեղական պայմաններին ու պահանջներին.

գ) կազմակերպումը գավառի ուսումնասիրության.

դ) կազմակերպումը պարբերական փորձնական դասերի.

յե) ուսումնասիրությունը մանկավարժական մեթոդների ու հարակից հարցերի.

զ) մեթոդական ուսումնասիրությունը գործադրվող դասագրքերի և պիտույքների.

է) քաղդրագիտություն.

Բ. դպրոցական շինարարություն, այն է.—

ա) դասական պիտույքների հայթայթումը, դպրոցի կահավորումը, դպրոցական նոր շենքերի կառուցումը և հների վերանորոգումը.

բ) դպրոցական կոոպերատիվի կազմակերպումը. գ) աշակերտական կենտրոնական ու շրջիկ գրադարաններ հիմնելը. դ) դպրոցական ջերմոց, ոդյերևույթաբանական կայան, թանգարան, լաբորատորիա, արհեստանոց, դեղատուն, բաղնիք ստեղծելը և այլն։

Գ. Դպրոցը հասարակական աշխատանքներին մասնակից դարձնելը, վորի խնդիրներն են.—

ա) դպրոցների փոխադարձ կապը և համագործակցությունը. բ) աշակերտության մասնակցությունը գյուղի տնտեսական շինարարության գործում, գ) աշակերտության մասնակցությունը գյուղի սանիտարական և կուլտ-կրթական ձեռնարկներում։

Դ. Ուսուցչի հասարակական աշխատանքը.—

ա) խորհրդային դպրոցի ուսուցչի տիպը պարզելը. բ) ուսուցչի մասնակցությունը գյուղի տնտեսական, սանիտարական և կուլտ-կրթական ձեռնարկներում. գ) ուսուցիչն իբրև թղթակից։

8. Ռայոնական Մանկավարժական Խորհուրդը կարող է ունենալ սեկցիաներ՝ հատապատասխան աշխատանքներ կատարելու կամ հարցերն ուսումնասիրելու համար։

9. Ռ. Մ. Խորհուրդը հարկ յեղած դեպքում կարող է մասնագետ անձանց հրավիրել իր աշխատանքներին գործակցելու։

10. Ռ. Մ. Խորհրդի զբաղմունքները կատարվում են զեկուցումների, մտքերի փոխանակության և գործնական աշխատանքների ձևով։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՖՈՐՊՈՍՏԻ

1. Միասնական Աշխատանքի թե առաջին և թե յերկրորդ աստիճանի յուրաքանչյուր դպրոցում՝ վորտեղ 10 հոգուց վոչ պակաս պիոներներ կան, անկախ այն հանգամանքից, թե նրանք վոր կոլեկտիվից են, կազմակերպվում է պիոներների համախմբություն՝ «Պիոներական Ֆորպոստ» անունով։

Պիոներական Ֆորպոստը նպատակ ունի կազմակերպված ձևով դպրոցական աշակերտության վրա տարածել պիոներական ազդեցությունը։

2. Ֆորպոստ կազմակերպելու համար պատանիպիոներների գավառային կամ շրջանային բյուրոյի թույլտվությամբ գումարվում է տվյալ դպրոցի պիոներների ընդհանուր ժողով, վորտեղ ընտրվում է Ֆորպոստի պրեզիդիում՝ 3—5 անդամից։

3. Ֆորպոստը կոլեկտիվ չէ և այդ պատճառով պիոներներ ընդունելու և դուրս անելու իրավունք չի վերապահվում նրան։

4. Պիոներական Ֆորպոստի անելիքներն են.—

ա. աշակերտությանը մասնակից անել հասարակական-քաղաքական կյանքին և կանոնավորել նրա կապը

շրջապատի կազմակերպությունների հետ՝ պիոներական, կոմյերիտական և կուսակցական կազմակերպությունների, ժողովրդական գործարանի, պրոֆմիության, գյուղում՝ փոխոգնության հայլն։ Դպրոցին մասնակից անել անցկացնելիք կամպանիաների, տոների և այլ աշխատանքներին։

բ. Բարձրացնել աշակերտության քաղաքական-կուլտուրական մակարդակը և կանոնավորել դպրոցի ինքնավարությունը, մասնակցել Դպրոցական Խորհրդի կոմիսսիաներին, խմբակների աշխատանքներին, պայքարել հայհոյանքի, ծխելու դեմ հայլն։

գ. Կապել դպրոցի կրթական աշխատանքը պիոներականի հետ և ընդհանուրը (աշակերտական և դպրոցական որգաններին ծանոթացնել պիոներական կազմակերպության աշխատանքին և ծրագրին, մասնակցել դպրոցական ծրագրների, շաբաթական որացույցների մշակման ու հարմարեցման աշխատանքներին հայլն)։

դ. Նոր դպրոցի շինարարության գործում աշխատավոր ուսուցչությանը և Դպրոցական Խորհրդին ոժանդակություն ցույց տալ, ոժանդակել կրթական աշխատանքների կանոնավորման, քաղաքական, հակակրոնական և ֆիզիքական դաստիրակության աշխատանքներին. նպաստել ուսուցչության և աշակերտության մեջ նորմալ փոխհարաբերություններ հաստատելու։

5. Յերկու շաբաթը մի անգամ հրավիրվում է Ֆորպոստերի ընդհանուր ժողով, որը զեկուցումներ է լսում և հաստատում աշխատանքների ծրագիրը, զանազան ներկայացուցիչներ է ընտրում և նրանց միջոցով ծանոթանում ու քննության է առնում Դպրոցական խորհրդի և Աշակերտական խորհրդի աշխատանքները հայլն։ Ընդհանուր ժողովի վորոշումները պարտադիր են անխտիր բոլոր պիոներների համար։

6. Ֆորպոստի պրիզիդիումը զեկավարում է պիոնների առորյա բոլոր աշխատանքները։ Վորոշ հանձնարարություններ է անում յուրաքանչյուր պիոների։ Դպրոցական զանազան կազմակերպությունների համար ներկայացուցիչներ է տալիս և նրանցից հաշվետվություն պահանջում, զեկավարում է նրանց, կիրառում է ընդհանուր ժողովի վորոշումները հայլն։

7. Յեթե պրիզիդիումը բաղկացած է յերեք հոգուց՝ կազմվում է այսպես. նախագահ, փոխնախագահ, քարտուղար. սրանք ընտրվում են յերեք ամիսը մեկ անգամ։ Պրիզիդիումը հետևում է Ֆորպոստի վորոշումների գործադրության, կապ է պահպանում Լուսբաժնի և ուրիշ կազմակերպությունների հետ. Ֆորպոստերի աշխատանքների համար պրիզիդիումը պատասխանատու յե Գավառային բյուրոյի առաջ։

8. Յուրաքանչյուր Ֆորպոստ կցված է մի կոլլեկտիվի, վորին նա ծանոթացնում է իր աշխատանքներին։ Կոլվարը պարտավոր է ներկա գտնվել Ֆորպոստի պրիզիդիումի ժողովներին, կազմակերպել Ֆորպոստի աշխատանքները, սակայն վոչ մի ճնշում չը-գործադրելով պրիզիդիումի և պիոներների ինքնուրույնության վրա։

9. Գաառնի պիոներների բյորոյն կոլլեկտիվավարների միջոցով զեկավարում է Ֆորպոստերի աշխատանքները, պարբերաբար գումարելով Ֆորպոստերի պրիզիդիումների և կոլլեկտիվավարների ժողովներ։

10. Ֆորպոստի ամբողջ աշխատանքը (ընդհանուր ժողովներ և այլն) պետք է տարվի պարապմունքի ժամերից դուրս. ցանկալի է ազատ որերին (ակումբի որը), վորպեսզի պիոներները չըծանրաբեռնվեն։

11. Ֆորպոստի և պրիզիդիումի ժողովներին ցանկալի է, վոր Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչը ներկա գտնվի. անհրաժեշտ է, վոր ուսուցիչները մաքսիմալ չափերով ոժանդակեն Ֆորպոստերին և ընդհակառակը։

12. Պիոներական Ֆորպոստն իր բոլոր աշխատանքները տանում է Աշակերտական խորհրդի գծով, վորտեղ աշխատում է ունենալ իր ներկայացուցիչները, և Դպրոցական խորհրդի գծով, վորտեղ մտնում է կոլեկտիվավարը՝ վճռական ձայնի իրավունքով։ Կոլեկտիվավարն ոժանդակում է Ֆորպոստի վորոշումները և Պիոներական բյուրոյի ցուցմունքները կատարելուն։

13. Ֆորպոստի և Դպրոցական խորհրդի միջև ծագած բոլոր վեճերն ու թյուրիմացությունները պետք է քննության առնեն և հաթի Լ. Կ. ՅԵ. Միության համապատասխան կոմիտեն, Սոցդաստվարչությունն ու Լուսաժինը։

14. Այն դպրոցներում, վորտեղ Լ. Կ. ՅԵ. Մ-ի բջիջ կա, Պիոներական Ֆորպոստն իր աշխատանքները համաձայնեցնում է նրան և իրագործում է նրա հրահանգները։

15. Պիոներական Ֆորպոստի պրիզիդիումի կազմը հաստատում է Պիոներական բյուրոն, վորի և պրիզիդիումը բոլոր աշխատանքների մասին կանոնավոր կերպով հաշիվ է տալիս։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ.

1) Դպրոցական կոոպերատիվը կազմակերպվում է նպատակ ունենալով վարժեցնել յերեխաներին հասարակական և կոլեկտիվ սովորույթներին, նպաստել նրանց ինքնագործունեության և աշխատանքային ունակությունների զարգացմանը, բավարարել նրանց գրենական և դպրոցական կարիքներից բղխող այլ պիտույքների պահանջները, ցույց տալ նյութական փոխադարձ ոգնություն անդամ ընկերներին և նպաստել յերեխաների կոոպերատիվ դաստիարակման գործին։

2) 1-ն հոդվածում հիշված նպատակներին հասնելու համար կոոպերատիվը իրավունք ունի.—

ա) Աշակերտների և դպրոցական աշխատակիցների կարիքները բավարարելու համար բաց անել դասագրքերի, գրենական և այլ պիտույքների առևտուր։

բ) Կազմակերպել արհեստանոցներ, հիմնել ագարակներ և ունենալ ցանքսեր։

գ) Ցույց տալ ամեն տեսակի աջակցություն իր անդամների կուլտուրական և ֆիզիքական զարգացմանը։

դ) Աշակերտների մեջ կոոպերատիվ գաղափարը տարածելու նպատակով կազմակերպել դասախոսություններ, ռեֆերատներ, զեկուցումներ կոոպերացիայի շուրջը։ Իր անդամներին մասնակից անել կոոպերացիայի աշխատանքներին և հրատարակել լրագրներ և ժուրնալներ։

3) Դպրոցական կոոպերատիվը, միացնելով աշակերտությանը, իրենից իրավաբանական անձնավորություն չի ներկայացնում։

2. ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4) Կոոպերատիվին անդամ կարող են լինել.....
.....դպրոցի բոլոր այն աշակերտները, վորոնք յենթարկվում են սույն կանոնադրության՝ անկախ նրանց տարիքից։

5) Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամը մուծում է մուտքի վճար և փայավճար, վորոնց չափը վորոշում է կոոպերատիվ անդամների Ընդհանուր ժողովի կողմից։

Ծանոթություն 1. Մուտքի վճարը հետ չի վերադարձվում վոչ անդամի հեռացման և վոչ էլ նրա ինքնակամ հեռանալու դեպքում։

Ծանոթություն 2. Փայավճարները կարող են մուծվել մաս-մաս՝ ժամկետներով, վորպիսիք վորոշվում են Ընդհանուր ժողովի կողմից։ Կոոպերատիվին մասնակցողների փայավճարը նրանց ինքնակամ հեռանալու կամ հեռացվելու դեպքում վերադարձվում է անհապաղ։

6) Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամը պետք է յենթարկվի կոոպերատիվի անդամների Ընդհանուր ժողովի ու Վարչության վորոշումներին։

7) Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ պարտավոր է հաճախել ընդհանուր ժողովներին և կարող է բացակայել միայն հարգելի պատճառներով։

Ընդհանուր ժողովը կարող է հեռացնել կոոպերատիվից յուր այն անդամներին, վորոնք խախտում են կոոպերատիվի վարչական մարմինների որինական պահանջները կամ գործում են կոոպերատիվի շահերի դեմ։

8) Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ, յեթե ցանկանում է, կարող է ինքնակամ հեռանալ կոոպերատիվից, այդ մասին նախորոք դիմում ներկայացնելով։

9) Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ունի միայն մի ձայն իրավունք, վորը ուրիշին տալ չի կարող։

10) Անդամների ընդունելությունը կատարվում է կոոպերատիվի վարչության միջոցով, վորի մասին հայտարարվում է Ընդհանուր ժողովին ի գիտություն։

3. ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ

11) Կոոպերատիվի գործերը վարում են՝ ա) Ընդհանուր ժողովը և բ) Վարչությունը։

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

12) Ընդհանուր ժողովը լինում է հերթական՝ յերեք ամիսը մի անգամ (յուրաքանչյուր յեռամսյակի վերջը)

և արտակարգ՝ վորը հրավիրվում է կոոպերատիվի վարչության հայեցողությամբ, Ստուգիչ Հանձնաժողովի, կամ Դպրոցական Խորհրդի պահանջներով, և կամ կոոպերատիվի անդամների $^1/_5$ մասի դիմումով։

13) Ընդհանուր ժողովի իրավասության յենթակա յեն.—

ա) Վարչության և ստուգիչ հանձնաժողովի ընտրությունը.

բ) Վարչության հաշվետվության, նախահաշվի և կոոպերատիվի գործունեության ծրագրի հաստատումը.

գ) Սույն կանոնադրության կետերի փոփոխումն և ավելացումը.

դ) Զանազան հանձնաժողովների ընտրություններ.

յե) Վարչության և Ստուգիչ Հանձնաժողովի գործունեության մասին յեղած զանգատների քննությունը

զ) Կոոպերատիվի գործունեության հետ կապ ունեցող և վարչության իրավասության մեջ չըմտնող բոլոր խնդիրների վճռումը։

14) Յուրաքանչյուր ընդհանուր ժողովի տեղի, ժամանակի, այլև որակարգի մասին Վարչությունը ժողովից 3 որ առաջ հայտարարություն և տալիս դպրոցում կամ դպրոցական թերթում։

15) Ընդհանուր ժողովը որինական է համարվում, յերբ ներկա յեն անդամների $^2/_3$ մասից վոչ պակաս։

16) Ընդհանուր ժողովը բացվում է Վարչության նախագահի կամ նրան փոխարինողի կողմից։

17) Ընդհանուր ժողովի նախագահությունն ընտրվում է ընդհանուր ժողովում ներկա այն անդամներից, վորոնք չեն մտնում Վարչության և Ստուգիչ հանձնաժողովի կազմերի մեջ։

18) Ընդհանուր ժողովում հարցերը վճռվում են բաց քվեարկությամբ և ներկաների բացարձակ մեծամասնությամբ։

19) Ընդհանուր ժողովի արձանագրությունները կազմվում ու ստորագրվում են ժողովի նախագահության կողմից և պահվում են հատուկ մատյանի մեջ։

Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

20) Կոոպերատիվի Վարչությունն ընտրվում է Ընդհանուր ժողովում կոոպերատիվի անդամներից, վոչ պակաս 3 անդամից և 2 թեկնածուից՝ 3 ամիս ժամանակով։

21) Նորընտիր Վարչության կազմի մեջ աշխատանքի հաջորդականության նպատակով անհրաժեշտորեն պետք է ընտրել նախկին Վարչության անդամներից գոնե մեկին։

22) Վարչության իրավասության ներքո յեն.—

ա) Կոոպերատիվի անդամների ընդունելությունը.

բ) Ընդհանուր ժողովի հրավիրումը.

գ) Կոոպերատիվի բոլոր գործերի ղեկավարումը.

դ) Սույն կանոնադրությունից բղխող բոլոր հարցերի լուծումը և Ընդհանուր ժողովի վորոշումների կատարումը։

23) Վարչության անդամները իրենք են կատարում աշխատանքի բաշխումն իրենց մեջ։

21) Կոոպերատիվի Վարչության բոլոր վորոշումները արձանագրվում են համապատասխան մատյանի մեջ։

25) Բոլոր հարցերը վորոշվում են բաց քվեարկությամբ և Վարչության ադնամների մեծամասնության քվեով։

4. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

26) Վերստուգիչ Հանձնաժողովը ընտրվում է Ընդհանուր ժողովում 3 անդամից և 2 թեկնածուից՝ 3 ամիս ժամանակով, վորը հսկում է կոոպերատիվի վարչության գործունեության վրա և ստուգում է նրա հաշիվները։

5. ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

27) Կոոպերատիվի միջոցները գոյանում են մուտքի վճարից, փայավճարներից, կոոպերատիվի գործառնությունից ստացված զուտ ոգուտից, փոխառություններից, նվերներից և կողմնակի այլ յեկամուտներից։

6. ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

28) Կոոպերատիվում տարվում են հաշվապահական գրքեր.—

1) Դրամական գումարների յել և մուտքի.

2) Ապրանքների յել և մուտքի.

3) Կոոպերատիվի անդամների, զանազան անձանց և հիմնարկությունների հաշիվների մասին։

29) Կոոպերատիվի վարչությունը կազմում է ամսական և հաշվապահական շրջանի գործունեության հաշվետվություն։

30) Կոոպերատիվի հաշվապահական շրջանը հաշվվում է յեռամսյակներով։

7. ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԼՈՒԾՈՒՄԸ

31) Կոոպերատիվը կարող է փակվել.—

ա) Ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորը պիտի հաստատվի Դպրոցական Խորհրդի կողմից.

բ) Յեթե անդամների թիվը 20-ից պակաս է և

գ) Դպրոցական Խորհրդի կամ Գավառսաբաժնի վորոշմամբ։

32) Կոոպերատիվն իրավունք ունի ձուլվել այլ դպրոցական կոոպերատիվի հետ, բաժանվել մի քանի բաժանմունքների և յուր գործունեությունը համաձայնեցնել յուր շրջանի նման կազմակերպությունների հետ։

33) Նախընթաց հոդվածում նախատեսված գործողությունները թույլատրվում են կոոպերատիվի Ընդհանուր ժողովի վորոշումից հետո։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԴՊՐՈՑԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Դպրոցի նյութական դրությունը բարվոքելու նպատակով այդ հիմնարկին կից կազմակերպվում է դպրոցա-տնտեսական հանձնաժողով։

2. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովի խնդիրներն են.—

ա) Հայթհայթել միջոցներ կամովին, միանվագ կամ պարբերական նվիրատվություններով, կազմակերպել վճարովի ներկայացումներ, համերգներ, դասախոսություններ (և այլն։

բ) Ուսման թոշակ նշանակելու դեպքում ուժանդակել պարզելու աշակերտների ծնողների նյութական դրությունը և աջակցել թոշակները հաջող կերպով ցանձելու (քաղաքներում և գյուղաքաղաքներում)։

գ) Ուժանդակել, վորպեսզի Լուսբաժնի միջոցով տվյալ հիմնարկին տնտեսական սպասավորումներ անելու նպատակով զանազան անհատների հետ կապված պայմանագրերն անշեղ կերպով կատարվեն։

3. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովն տուանձնապես հոգ է տանում կազմակերպելու դպրոցական, հոգաբաժինների շահագործումը։

4. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովը գործադրում և ամեն ջանք ստեղծելու դպրոցի համար յեկամուտի միայուն և ժամանակավոր աղբյուրներ։

5. Հիշյալ տնտեսական հանձնաժողովը պար. 2 ա. կետում ամեն տեսակի գանձումներն ու վճարումները պետք է հավաքի, խստորեն պահպանելով հաշվարկամության սկզբունքը։

6. Դպրոցա-տնտեսական հանձնաժողով կազմակերպում է Լուսբաժինը (Դպրոցի Խորհուրդը)։

7. Լուսբաժինը դպրոցա-տնտեսական հանձնաժողով ընտրելու համար դպրոցի աշակերտների ծնողներին, նաև այն քաղաքացիներին, վորոնք ցանկություն են հայտնում ուժանդակել այդ դպրոցի նյութական բարելավման, հրավիրում է ընդհանուր ժողովների։

8. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովում կարող են ընտրվել այն քաղաքացիները, վորոնք ընտրողական իրավունք ունեն Հ.Ս.Ֆ.Հ. Սահմանադրության համաձայն։

9. Քաղաքներում դպրոցա-տնտեսական հանձնաժողովների կազմը բաղկացած է 7 անձից, վորոնք են՝ —ընդհանուր ժողովի 4 ներկայացուցիչները, դպրոցի վարիչը, ուսուցչությունից մի հոգի, Դպրոցի Խորհրդի աշակերտ արդամների մեկը, Պրոֆբյուրոյի մի ներկայացուցիչ։

10. Գյուղերում հիշյալ հանձնաժողովի կազմը բաղկացած է 5—6 անձից, վորոնք են—ընդհանուր ժողովի 2 ներկայացուցիչները, դպրոցի վարիչը, աշակերտության, (4-րդ խմբից սկսած) գյուղխորհրդի և փոխոգկոմի մի-մի ներկայացուցիչ։

11. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովի մի ներկայացուցիչը խորհրդակցական ձայնով մասնակցում է Դպրոցական Խորհրդում։ Ներկայացուցիչը պետք է լինի դպրոցա-տնտեսական հանձնաժողովի այն անդամներից, որոնք Դպրոցական Խորհրդում որևէ ձևով չեն մասնակցում։

12. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովի ընտրված անդամներին իրենց պաշտոնում հաստատում է Լուսաբաժինը։

13. Այնն տարի հունվարին տեղի չեն ունենում դպրոցա-տնտեսական հանձնաժողովի ընտրությունները։

14 Դպրոցա-տնտեսական հանձնաժողովներն իրենց միջից ընտրում են նախագահություն հետևյալ կազմով—նախագահ, նրա տեղակալ և քարտուղար։ Նախագահության կազմում պարտադրաբար մտնում է հիմնարկի վարիչը։

15. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովի ամբողջ արդյունքը մտնում է տվյալ հիմնարկի հատուկ գումարների ընդհանուր ֆոնդի մեջ։

16. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովը տարեկան յերկու անգամ ընդ. ժող. հաշիվ է ներկայացնում իր գործունեության մասին։ Միաժամանակ հիմնարկության վարիչը տնտեսական հանձնաժողովին տեղեկացնում է հանձնաժողովի միջոցով ստացված յեկամուտները ծախսելու կարգի մասին։

Ծանոթություն.—Դպրոցա-տնտեսական հանձնաժողովը դպրոցի վարիչի հիշյալ ծախսերը գործադրելու հետ համաձայն չլինելու դեպքում, կարող է բողոքել Լուսաբաժնին։

17. Դպրոցա-տնտեսական հանձնաժողովն իրավունք չունի խառնվելու դպրոցի մանկավարժական և վարչական կյանքին։

18. Այն դեպքում, յեթե դպրոցա-տնտեսական հանձնաժողովը թերանում է իր գործում և խառնվում է իրեն չվերաբերվող խնդիրներին, Լուսաբաժինը վորոշում է հանում արձակելու հանձնաժողովը և նորը ընտրելու։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

1. Մանկան սոցիալական տեսչության խնդիրներն են.—

ա) Պայքարել մանկան անապահովության, մուրացիկության, պոռնկության, չարաշահության, սպեկուլյացիայի և իրավախախտման դեմ։

բ) Պայքարել վարձու աշխատանքով զբաղվող ընտանիքների, արհեստանոցների և տնայնագործական ձեռնարկությունների կողմից մանուկներին շահագործելու և դեպի նրանց ցույց տված ապորինի վերաբերմունքի դեմ։

2. Մանկան սոց. տեսչության որգան հանդիսանում է Սոցիալական Պաշտպանության Տեսուչների Խնամխուռը։

Սոցիալական պաշտպանության տեսուչ կարող է լինել 21 տարեկանից վոչ պակաս, դատի տակ չեղած, դատարանով իրավունքներից չզրկված յուրաքանչյուր քաղաքացի։

Մանոթություն.—1. Լ.Կ.ՅԼ. Միության անդամները կարող են լինել 18 տարեկանից սկսած։

2. Տեսուչների ընդհանուր թվի 50 տոկոսը պետք և դպրոցական աշխատավորներ լինի։

4. Սոցիալական պաշտպանության տեսուչները յենթարկվում են անչափահասների իրավապահպանության սեկցիաներին։

5. Մանկ. սոց. պահպանության տեսուչների պարտականությունն է այցելել այն արհեստանոցներն ու տնայնագործական ձեռնարկությունները, վորոնք չեն զբաղվում վարձու աշխատանքով, այցելել նաև ընտանիքները՝ ծնողական և խնամակալական իրավունքները ի չարը գործ դնելու մասին տեղեկություններ ստանալու դեպքում։

6. Վարձով աշխատող անչափահասների աշխատանքի պաշտպանության որենքների խախտում նկատելիս մանկան սոց. պահպանության տեսուչն այդ մասին հայտնում է աշխատանքի տեսչությանը։

7. Մանկան սոց. պաշտպանության տեսուչներն անհրաժեշտության դեպքում դիմում են միլիցիայի և նման որգաններին օգնությանը։

8. Կալանավորված անչափահասներն ընդունման կայաններում մնում են մինչև գործի քննությունը. վորից հետո, համաձայն հանձնաժողովի վորոշման՝ նրանք տեղավորվում են համապատասխան հիմնարկներում, հանձնվում ծնողներին կամ խնամակալներին։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿՈՄԻՍՍԻԱՆԵՐԻ

I

1. Անչափահասների կոմիսսիան կազմակերպում է Գավառասրաժինը՝ մանուկների սոցիալական պահպանության սեկցիաներին կից։

2. Կոմիսսիան բաղկացած է 3 անդամից, որոնք են.—նախագահ՝ դատախազ (Դատաբաժնի ներկայացուցիչ), բժիշկ և Արդժողկոմատի ներկայացուցիչ (գավառներում ժող. դատավորը)։

3. Ըստ անհրաժեշտության՝ տվյալ գավառում կարող են կազմակերպվել և ուրիշ կոմիսսիաներ նույնպիսի կազմով։

4. Կոմիսսիային կից պետք է լինի քննիչ-դաստիարակների կոնտինգենտ։

5. Բոլոր անչափահասները մտնում են ընդունման կայանները, իսկ նրանց գործերը հանձնվում կոմիսսիային։

6. Անչափահասների կոմիսսիայի բոլոր կարգադրությունները ու որոշումները, ինչպես գործի քննության ընթացքում, նույնպես և այն ժամանակ, երբ անչափահասները գտնում են քննիչ-դաստիարակների պատասխանատու հսկողության տակ, պարտադիր են բոլորի համար։ Սույն որոշումները կատարող անձանց՝ ամենալայն աջակցություն պետք է ցույց տա վարչական իշխանությունը։

Կոմիսսիաների որոշումները չկատարելը կամ նրանց դեմ գնալը, ում կողմից էլ լինի դա, կընկատվի որպես քրեական հանցագործություն և կենթարկվի դատական պատասխանատվության։

7. Անչափահասների մասնակցությամբ հասակակիցների կատարած հանցագործության արձանագրությունները, նաև 16-ից բարձրահասակ անչափահասների կատարած հասարակականապես վնասակար գործողությունների, ինչպես որինակ՝ սպանության, ծանր վերքեր հասցնելու, ավազակության, թալանելու, հրդեհելու, դրամանիշներ ու դոկումենտներ կեղծելու, կաշառակերության, խորհրդային և հասարակական հիմնարկներից յուրացումներ և խոշոր սպեկուլյացիա կատարելու մասին կազմված արձանագրությունները 24 ժամվա ընթացքում հանձնվում են ժողդատավորին (կոմիսսիայի անդամ)։ Վերջինս արձանագրությունները ստանալուց հետո, 3 որվա ընթացքում պարտավորը է քննել անչափահասի հանցագործությունը և ներկայացնել կոմիսսիային զեկուցում, ընդգծելով անչափահասներին վերաբերվող կետերը. բացի այդ՝ պետք է դատի և քննության յենթարկվեն հանցագործ հասակավորները, սակայն մինչև զեկուցում լսելը կոմիսսիան դատավորի գործողություններին խառնվել չի կարող։

II

8. Կոմիսսիայի իրավասության ներքո յեն մինչև 18 տարեկան յերկու սեռի պատկանող անչափահասները։

9. Կոմիսիան քննում է անչափահասների գործերը համաձայն. ա.—համապատասխան պետական ու հասարակական հիմնարկների. բ.—ծնողների, բարեկամների ու մասնավոր անձանց, գ.—իր սեփական արձանագրությունների ու հայտարարությունների։

10. Կոմիսիան պարտավոր է հանցագործ հասակավորներին յենթարկել դատական պատասխանատվության, անհապաղ ժողովատարանին հանձնելով նրա գործերը՝

ա) Անչափահասներին ավյալ հասարակական հանցագործությանը դրդելու համար։

բ) Անչափահասների չարագործությանը մասնակցելու համար։

գ) Անչափահասներին պոռնկության դրդելու և

դ) Անչափահասների աշխատանքը շահագործելու համար։

11. Կոմիսիան պարտավոր է համապատասխան հիմնարկների առաջ միջնորդություն հարուցել անչափահասներին այս կամ այն ոգնությունը հասցնելու, ինչպես որինակ՝ նպաստ, անձնական վկայականներ, գոկումենտներ և այլն բաց թողնելու համար։

III

12. Կոմիսիաների նիստերը պետք է գոնփակ լինեն. նիստերին ներկա յեն լինում միայն կոմիսիայի անդամները, քարտուղարը և հնարավորության դեպքում՝ նաև անչափահասի մասին նյութեր հավաքող-քննիչ դատախարակը։

13. 16—18 տար. անչափահասների գործերը

քննելիս, ժողովատարաններում նրանց կազմի մեջ վճռական ձայնի իրավունքով մտնում են կոմիսիաների նախագահները։

14. Անչափահասների կոմիսիաների գործունեության ընթացքում նրանց ցլխավոր ոգնական հաղորդանում է քննիչ-դատախարակների ինստիտուտը։

Մինչ գործի քննությունը քննիչ-դատախարակը անչափահասի մասին նյութեր է հավաքում, վորոնք անհրաժեշտ են ուսումնասիրելու այն միջավայրը, վորտեղ նա յեղել է և առաջ յեկել կատարած իրավախախտումն առաջ բերող պայմաններն ու պատճառները։

Քննիչ-դատախարակից տեղեկանալով այս բոլորի մասին, կոմիսիան մանրամասնորեն ծանոթանում է գործին և մանկանը ուղարկում, նայած հանցագործության չափին ու վորակին, նորմալ մանկատները կամ, յեթե դժվար դատախարակվողներ են՝ բարոյապես դեֆեկտիվների դաղութը և կամ հանձնում ծնողներին ու խնամակալներին։

ԹԵԶԻՍՆԵՐ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Մեր դպրոցի նպատակն է յերեխային տալ այնպիսի դաստիարակություն, վոր նա դառնա հասարակության պիտանի անդամ՝ կենսուրախ, առողջ, աշխատունակ, ոժտված հասարակական ընդունակներով, կազմակերպչական ունակություններով և անկուն պայքարող՝ բանվոր դասակարգի իդեալների համար, շինարար՝ կոմունիստական հասարակակարգի։

2. Խորհրդային դպրոցի ինքնավարությունը յերեխաներին կառավարելու մի միջոց է և վոչ էլ մեթոդ՝ նրան գործնականապես սովորեցնելու պետական սահմանադրությունը, այլ աշակերտական ինքնագործունեության կազմակերպության—ինքնակազմակերպություն։

Աշակերտական ինքնավարությունը ձգտում է կազմակերպել իր անդամների կոլեկտիվ աշխատանքը և հասցնել դա արտադրականության բարձր չափին։ Դրա համար աշխատանքը պետք է բաշխվի նպատակահարմար ձևով՝ ըստ տարիքի, հատուկության, դպրոցի տիպի հայլն։

3. Կոլեկտիվ աշխատանքն է հանդիսանում գլխավոր կազմակերպող ֆակտորը։ Դա յել հանդիսանում է աշակերտական ինքնավարության զարգացման նախապայմանը։

4. Ինքնավարության ձևերը չպետք է թելադրվեն դրսից, այլ բղխեն դպրոցական կյանքի կազմակերպման կարիքից և կազմակերպվեն աշակերտության հասարակական զարգացման պրոցեսում։ Այդ ձևերը, բնականաբար, կարող են փոխվել՝ նայած աշակերտների գիտակցության աստիճանին և կազմակերպվածության։ Ուստի դպրոցներին չպետք է տրվի միաձև պատրաստի կանոնադրություն, այլ տեղերին թողնվի այդ աշխատանքը կատարել՝ հիմնված տվյալ դպրոցի պայմանների և սույն թեզիսներում արտահայտված սկզբունքների վրա։

5. Աշակերտական ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտության ընդհանուր, հարկ յեղած դեպքում՝ նաև խմբակային համախմբումներով և ընդգրկի դպրոցի հասարակական-քաղաքական, ուսումնական-գիտական, գեղարվեստական, ֆիզիքական, առողջապահական, կարգապահական, փոխադարձ ոգնության և գործունեության այլ ընագավառները, վորոնցից յուրաքանչյուրի համար ստեղծվեն մարմիններ ընտրական սկզբունքով։

6. Աշակերտական ինքնավարութ. ղեկավար ամենարարձր մարմինն է Աշակերտական ընդհանուր ժողովը, վորն ընտրում է Աշակերտական խորհուրդ։ Վերջինս իր գործունեությամբ կապվում է մի կողմից Դպրոցական խորհրդի հետ ներկայացուցիչների միջոցով, մյուս

կոգմից վարում և աշակերտության դպրոցական—հասարակական կյանքը։ Աշակերտական խորհուրդն ընտրվում է ամենաակտիվ աշակերտներից՝ առանց նկատի ունենալու վոր խմբից լինելու հանգամանքը։

Խումբն իրրև հասարակական առանձին միավորայս կամ այն գործում կարող է ունենալ իր նախաձեռնությունը. ուստի այդպիսի դեպքերում կարող են ստեղծվել դասարանական ժամանակավոր կոմիսիաներ, վորոնք իրենց աշխատանքը վերջացնելուց հետո անմիջապես պետք է լիկվիդացիայի ենթարկվեն։ Այդպիսով, դասարանական մշտական մարմինների գոյությունը մերժվում է։

7. Ինքնավարության աշխատանքներում աշակերտությանը պետք է գործակցի ուսուցիչը կամ ուսուցչությունը, նամանավանդ կուլտ-կրթական սեկցիոն աշխատանքներում։ Սակայն ուսուցիչը կամ ուսուցչությունն իր հեղինակությամբ չպետք է ճնշի յերեխաներին, այլ աջակցի նրանց՝ ինքնագործունեության բոլոր հնարավորությունները պահպանելու պայմանով։

8. Ինքնավարության գործում Լ.Կ.ՅԵ.Մ. և Պիոներական կազմակերպությունը չեն ոգտվում առանձին իրավունքներով։ Սակայն նրանց դերը մեծ է քաղաքական-հասարակական դաստիարակության և դպրոցական շինարարության գործում, այլև իրենց շարքերը գրավելու նոր անդամներ, դպրոցը կապելու աշխատավոր յերիտասարդության, պատանեկության և բանվոր դասակարգի ընդհանուր շարժման հետ։

9. Լ.Կ.ՅԵ.Մ. և Պատկոմ. կազմ. աշակ. ինքնավարության մեջ հանդես են գալիս՝ առաջինն իր ըմբիջով

և յերկրորդը՝ ֆորպոստով։ Սրանցից յուրաքանչյուրը մի-մի ներկայացուցիչ և տալիս Աշակերտական խորհրդում։

10. Աշակերտությունը ձայնի իրավունքով ունի իր ներկայացուցիչները Դպրոցական խորհրդում։

11. Աշակերտական ինքնավարությունը չպետք է սահմանափակվի միայն ուսյալ դպրոցի ներքին գործունեությամբ։ Դպրոցական ամբողջ կոլեկտիվը պետք է ձգտի կապ հաստատել մյուսի հետ՝ գործնական հողի վրա միացյալ աշխատանքներ տանելու համար։ Այս տեսակետից շատ ցանկալի է դպրոցներում հաստատել փոխադարձ շեֆություն, լինի քաղաքի թե գյուղի դպրոցներում։ Շեֆությունն արտահայտվելու է միմյանց բոլոր հնարավոր ոժանդակությունները ցույց տալով։

12. Անհրաժեշտ է նույնպիսի կենդանի կապ պահպանել զանազան բանվորական հիմնարկների ու գյուղերիտասարդության կազմակերպությունների, այլև մոտակա գործարանների, արհեստանոցների, խորհրդ. տնտեսությունների և այլ ձեռնարկների հետ և ոժանդակել՝ վերացնելու անգրագիտությունը, գրադարան-ընթերցարանի, ակումբի, հանդեսների կազմակերպման գործում։ Լայն։ Իսկ ձևական կապն ապարդյուն կանցնի աշակերտության հասարակության դաստիարակության տեսակետից։

13. Իր պարզ ձևով ինքնավարություն կարող է լինել նաև մանկապարտեզներում։ Այստեղ յերեխաների անհատական ժողովները ենթարկվում են կոլեկտիվին՝ խաղերի, դրամատիզացիայի, յերգի ժամանակ։ Կարգապահության խնդիրները և զանազան յերևույթների ու վարմունքի գնահատությունը հատուկ է մանկապարտեզի յերեխաներին։

ՑԱՆԿ

1. Աշխատանքային Միասնական Դպրոցի
2. Գավառական Մեղոթական Բյուրոյի
3. Ռայոնական Մանկավարժական Խորհրդի
4. Պիոներական ֆորպոստերի
5. Դպրոցական կոոպերատիվի
6. Դպրոցական տնտեսական հանձնաժողովի
7. Մանկան սոցիալ—տեսչության
8. Անչափահասների կոմիսիաների
9. Թեղիսներ.—Աշակերտական ինքնավարության մասին

ՀՀ Ազգային գրադարան
NL0863951

2406

ԳԻՆԸ 10 ԿՊԵԿ